է Կամենիցի Հայոց դատարանին գրուածներէն՝ կը վկայէ որ այս եկեղեցւոյս տեղը 1398ին, Սինան Խութլու – պէյի որդի հայկազնն չինել տուած է փայտաշէն եկեղեցի մը յանուն Ս. Նիկողայոսի։ Հետաքննական է յիշատակարանս շատ կողմանէ. յայտնի կ'երևի նորա մէջ չինողին զգուշութիւնը, զի չինի՝ օր մի հայախօս և հայածէս ժողովուրդը օտարանայ իւր հայրենեաց աւանդութիւններէն և կորսուի օտարաց հետ խառնուելով. այս է պատճէն կտակին. « Այս իմ կամաց և հաստատութեան անձին ձեռագիր է, Սինանի որդոյ Խութլու – պէյի, յաղագս որոյ կու տամ առաջի Աստուծոյ զգիրս զայս Լուսաւորչին սուրբ աթոռոյն և Նահանգիս առաջնորդացն, ով որ պատահէ, (և այժմ տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի ամենայն Ռուսաց և Ազախաց աշխարհի և 'ի Ներկայ ժամանակս՝ հոգևոր առաջնորդ է Նահանգիս և մեզ). վասն որոյ խոստացեալ էի չինել եկեղեցի յանուն սրբոյն Նիկաւղայոսի սքանչելագործ հայրապետին, և այժմ Աստուծոյ առաջնորդութեամբն յանկ եղեալ կատարեցաւ. և ես ըստ խոստման իմում նուիրեցի Աստուծոյ և Լուսաւորչին սուրբ աթոռոյն և առաջնորդի Նահանգիս. և ազատ կու առնեմ 'ի մարմնաւոր տերանց։ Ոչ որ իշխանութիւն չունի որ տիրէ սուրբ տաճարիս, ոչ ես, և ոչ իմ տունն, և ոչ իմ տղայք, և ոչ այլ ազգականք, ոչ հեռաւորք և ոչ մերձաւորք։ Եւ ով որ յանդգնի և տէրութիւն կամենայ առնել, սուտ է և անիրաւ յամենայն դատաստան, և տուգանս տացէ հոգեւոր և մարմնաւոր դատաւորաց, և առցէ զանէծս զԱստուծոյ և զսուրբ առաքելոցն և հայրապետացն։ Բայց միայն այս՝ որ թէ պատահէ՝ որ